7. Գրիգոր Այվազեանց . - . . :	50
8. Սարգիս Զարաբանդեանց . . . -	50
Ընդամենն է (հազար ռուբլի)	1000
9. 1889 Կարապետ աղայն Լալայեանց նուիրեց հինգ հարիւր ռուբլի	500
	1500

Այս 1000 ռուբլին ստացայ՝ երբ վերադարձայ Զամախի պ. Ենովք Բուդաղեանցի գրութեան հետ, և յանձնեցի վանքի վանահօրն շինութեան վրայ ծախսելու, որն արդէն սկսել էի և այնպէս գնացի Բագու։

Այն ինչ Վեհ. Կաթուղիկոսից հրաման ստացայ, սեպտ. ամսին վերստին գնալ Բագու Օգոստափառ Կայսերն ընդ առաջելու հոկտ. ամսին, և վանքի շինութեան ծախուց ցուցակիցն իմացայ, որ ծախքը հասել է ցայս վայր 1600 (հազար վեց հարիւր) մասամբ և դեռ քանի հարիւր մանէթ ևս կը ծախսվի, ինչպէս վերջումն երևաց, որ ծախսել է 2200 մանէթ։

Այս ծախսի ծանրութիւնը զգալով և մի ուրիշ տեղից արդիւնք չունենալով վանքը, և ստիպուած վանահօր թախանձանքից, Բագու եղածս միջոցին յայտնելով մեր այս նեղ դրութիւնը, մեծապատիւ Կարապետ աղա Լալայեանցին՝ խնդրեցի օգնութիւն հասցնել, և նա Կարապետ աղայն ամենայն սիրով և բարեպաշտ հոգւով խոստացաւ և նոյն օրը շնորհեց հինգ հարիւր ռուբլի դրամ (500 ր.) և վայելեց եկեղեցւոյ օրհնութիւնը և մանաւանդ իմն և վանահօրն։

Է. Բագուայ եկեղեցական հաշուոց խնդիրն՝ որոյ համար լրագրաց մէջ շատ գրեցին ու խօսեցին թէ և, առանձին մասնաժողովի քննութեամբ պարզուել էր արդէն և գործը հոգեւոր իշխանութեան յայտնի էր, սակայն ես ևս մերձաւորապէս վերահասութիւն գործելով ստուգեցի, որ այնքան ասուլիսը լոկ վրէժխնդրութեան հետեւանք էր մի քանի մարդոց առ երեսփոխանն և ոչ եկեղեցւոյ կամ հասարակաց օգտի համար։

Ը. Բագուայ ժողովրդոց ծխաբաժանութեան խնդիրն քանի